Հավելված 1
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրենի
2021թ.-ի փետրվարի 25-ի N 53/Լ հրամանի

Մրցույթի անցկացման պայմանները

Մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները, մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) ներկայացնում են մրցույթի հայտերը: Մրցույթի հայտերը ներառում են հետևյալ տեղեկություններն ու փաստաթղթերը.

ա) մրցույթի մասնակցի անվանումը գտնվելու վայրը, հեռախոսահամարները, պետական գրանցման վկայականի պատճենը,

բ) սարքավորումների և/կամ մատուցվող ծառայությունների նկարագրությունը, մատակարարման ժամկետները,

գ) նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից նմանատիպ ծառայությունների մատուցման ծավալը՝ նշելով պատվիրատուներին և կցելով պայմանագրերի պատճենները,

դ) մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատակարարվող ապրանքների և/կամ մատուցվելիք ծառայությունների որակը:

Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մեկ կրկնօրինակից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Միաժամանակ ծրարի վրա պետք է կատարվեն՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրի /հասցեի/ և «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» գրառումները:

Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխությունը ներկայացվում է սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի արդյունքների մասին արձանագրության ձևակերպումից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Բանկի և մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի /մասնակիցների/ միջև կնքվում է պայմանագիր, ընդ որում Բանկը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկում է կնքել պայմանագիրը մրցույթի արդյունքների մասին արձանագրության ձևակերպումից հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթում կարող են հաղթող ճանաչվել մեկից ավելի կազմակերպություններ՝ հաշվի առնելով մատակարարվող ապրանքի տեսականին և այլ հանգամանքներ:

Հավելված 3
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գործադիր տնօրենի
2021թ.-ի փետրվարի 25-ի N 53/Լ հրամանի

Բանկային ավտոմատացված մեքենա

1. Ընդհանուր նկարագրություն

Բանկային ավտոմատացված մեքենան (ԲԱՄ) ինքնասպասարկման լուծում է նախատեսված բանկային ոլորտի համար, որը հնարավորություն է տալիս իրականացնել բանկային գործարքների լայն շրջանակ:
Լուծումը իրենից ներկայացնում է սարքավորման և ծրագրային ապահովման ընդհանուր համակարգ, որի միջոցով իրականացվում են մի շարք բանկային գործարքներ՝

- Կանխիկացում (քարտից, NFC մեթոդով, հաշվեհամարից, կոդի միջոցով)
- Կանխիկի մուտք (քարտին, հաշվեհամարին)
- Տարադրամի փոխանակում կանխիկով
- Վճարումներ կանխիկով, քարտով, հաշվեհամարից (Կոմունալներ, Պետբյուջե, ծառայությունների դիմաց)
- Փոխանցումներ (ներբանկային, միջբանկային)
- Արագ դրամական փոխանցումներ
- Հաշվի սպասարկում (հաշվի բացում, տեղեկանքի և քաղվածքի տրամադրում)
- Քարտի սպասարկում (պատվիրում, վերաթողարկում, PIN-ի փոփոխություն)
- Ավանդների գործարքներ (համալրում, նոր ավանդի տրամադրում, խզում)
- Վարկերի գործարքներ (մարում, նոր վարկի տրամադրում)

Լուծումը համալրված է բոլոր անհրաժեշտ սարքավորումներով և ծրագրային ինտեգրացիաներով, որոնք անհրաժեշտ են նշված գործառույթները պատշաճ իրականացնելու համար: Համակարգը համալրված կլինի դեմքի ճանաչման լուծումով (Face Recognition): Այն կոգտագործվի որոշ գործարքներում նույնականացումը և հաստատումը իրականացնելու նպատակով: Համակարգը կունենա նաև հաճախորդին տեսազանգի միջոցով սպասարկելու հնարավորություն: Այսինքն հաճախորդը անհրաժեշտության դեպքում կարող է տեսազանգով կապ հաստատել Բանկի սպասարկող անձնակազմի հետ:

2. Սարքի տեխնիկական նկարագրություն

Սարքը իրենից ներկայացնում է ավտոմատացված մեքենա, որը համալրված կլինի վերը նշված գործառույթների ամբողջական իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Սարքը նախատեսված է ներսենյակային օգտագործման համար:
Սարքը կունենա հետևյալ սարքավորումները՝

- Ինտերակտիվ էկրան
- Կանխիկի ելքի սարքեր՝ թղթադրամ, մետաղադրամ
- Կանխիկի մուտքի սարքեր՝ թղթադրամ, մետաղադրամ
- Թղթադրամի ներկանյութ
- Բանկային քարտ ընթերցող սարք
- Անդորրագրի և A4 էջի տպման սարքեր

- Անձնագրի սկանավորման սարք (գունավոր)
- ID ընթերցող սարք
- Ստորագրելու սարքավորում
- Բարձրախոս
- Բացման տվիչի սարքավորում
- Տեսանկարահանող սարքեր
- Համակարգիչ
- Անխափան սնուցման սարք

Սարքը պետք է ունենա ՀՀ ԿԲ ՖԳԻԱՍ-ի կանոնակարգի պահանջներին համապատասխանող անվտանգության համակարգ:
Կանխիկ պարունակող սարքերը կլինեն լրացուցիչ պաշտպանված մետաղական կաղապարում՝ բարձր պաշտպանվածությամբ փականներով:

3. Ծրագրային համակարգի նկարագրություն

Ծրագրային ապահովումը իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ: Այն կաշխատի բանկի ներքին ցանցով և ինտեգրված կլինի բանկ ներքին համակարգին:
Ծրագրային ապահովումը բաղկացած կլինի մի քանի մասից՝

- Ծրագրային ապահովում ԲԱՄ-ի համար

Հաճախորդների կողմից գործարքներ իրականացնելու համար համապատասխան ինտերֆեյսով ծրագրային ապահովում: Ծրագիրը ինտեգրված կլինի բանկի API-ներին, ինչը կապահովի գործարքի համար անհրաժեշտ ֆունկցիոնալություն: Ինտերֆեյսը կներառի գործարքի համապատասխան ընթացք ապահովող էջեր կամ հղումներ դեպի գործընկեր կազմակերպության ինտերֆեյս:

- Գործընթացների վերահսկման համակարգ

Կառավարման և մոնիտորինգի համար նախատեսված ծրագիր, որի միջոցով Բանկը կկարողանա հետևել և վերահսկել տեղադրված բոլոր ԲԱՄ-երի գործընթացները:
Համակարգը բանկի անձնակազմին թույլ կտա կատարել ընթացիկ գործարքների վերահսկում, ինկասացիայի գործընթացի կազմակերպում, տեխնիկական խնդիրների բացահայտում:

- Օնլայն խորհրդատուի համակարգ

Սպասարկող անձնակազմի համար նախատեսված ծրագիր, որի միջոցով Բանկի աշխատակիցը կկարողանա սպասարկել հաճախորդին տեսազանգի միջոցով:
Համակարգի միջոցով իրականացվող գործարքների տվյալները կլոգավորվեն և հասանելի կլինեն Բանկի համար: Այն կունենա նաև տեսանկարահանման համակարգ, որը կնկարահանի գործարքների իրականացման ընթացը: Տեսաձայնագրումը և պահպանումը կիրականացվի ըստ ՀՀ ԿԲ ՖԳԻԱՍ-ի կանոնակարգի պահանջների: